




Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա Ի Ե Տ Ա Բ Ե Բ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Հ Ա Յ Կ Ա Ջ Ե Ա Ն Թ Ա Ն Գ Ա Բ Ա Ն

ԴԱՇՆԱԿՔ ԼԱՄԱՐՏԻՆԵՍՅ

ԹԱՐԳՄԱՆԵՍ

ԽՈՐԷՆ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ

Այն հոգաւոր քերթողին՝ որոյ քնարին քաղցրախօս քերքը ամեն սրտերն զմայլեցուցին, և որոյ արդի բշուռութիւնը՝ բոլոր աշխարհի գոյքը կշարժե, եւոր մեր ամասերքին մեջ մեր համագգեաց ուշադրութիւնն հրաւիրեցինք, այս անգամ իր կենդանագիրն ընծայած ատենինս՝ կուգեմք միանգամայն ծանուցանել՝ որ մեր եւս մեր հարկը կնատուցանեմք փառաց Լամարտինի, քերթուածներովն զնա ծանօթացուցանելով:

Իր ԳԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԷ ԸՍՏՈՒՄ քերթուածը բարգձմանեցինք ի չափս հաշիւականս, ու ղեռ զայն իրոյս չընծայած՝ կկարծեմք որ մեր ընթերցողաց անհաճոյ պիտի չըլլայ մեր երկասիրութեանը ճաշակ մը հոս ընծայել:

Գ. ՏԱՐԻ, — ՅՈՒՆԻՍ 1858.

LES HARMONIES DE LAMARTINE,

TRADUITES

PAR CORÈNE V. CALFA.

En donnant aujourd'hui le portrait de l'illustre écrivain dont les chants harmonieux ont transporté tous les cœurs et dont les malheurs ont éveillé les sympathies du monde entier, malheurs sur lesquels nous avons attiré l'attention de nos compatriotes il y a peu de temps, nous sommes heureux d'annoncer que nous espérons, nous aussi, payer notre tribut à la gloire de Lamartine, en le faisant connaître par ses œuvres.

Nous avons traduit ses HARMONIES POÉTIQUES en vers arméniens, et, en attendant que nous puissions livrer cet ouvrage à la publicité, nous pensons être agréable à nos lecteurs en offrant à leur appréciation un spécimen de notre travail.

Գիտեմք որ մեր ազգային քաջամուտ լեզուագիտացն ու քերթողաց ոմանց այս գործոյս վրայ տուած գովեստները՝ մեր արժանաւորութենէն շատ աւելի են, եւ ոչ իսկ կրնամք պարծիլ նոյն իսկ Լամարքինի մեզի ըրած պատուասեր ընդունելութեանը, բայց սակայն յուսամք՝ որ գեր մեր աշխատանաց գլխաւորագոյն կէտը լցուցած ըլլամք, որ է բարգմանութեան հաւատարմութիւնը: Մեր այնպէս կհամարիմք՝ քէ բարգմանիչը, ամեն բանէ առաջ, բնագիր հեղինակին հաւատարիմ հային պիտի ըլլայ: Ուստի քերթողին խորին մտածութեանցը քափանցելէն ու բացատրութեանցը խելամուտ ըլլալու ըրած ջանքերնէս ետեւ՝ ճգամբք աշխատեցանք որ ծայրէ ծայր տող առ տող բարգմանեմք զայն ջանալով յաղթել այն ամեն դժուարութեանց՝ որ երկուց լեզուաց ոգւոյն տարբերութիւնը եւ քերթուածոյն խրրքնութիւնները՝ դիմացնիս կհանէին: Մեր երկայնամիտ ճգունքը իրենց ելքն ունեցան. ու քէ որ ոչ միշտ հաւասար չափ գործածեցինք՝ բայց այն ալ աւելի մեր հայկական տաղաչափութեան ամենանաճիս զանազանութիւնը վայելելու համար էր, առանց ի վերայ այսր ամենայնի քերթուածոյն ռգիկէն օտար բացատրութիւն մը եւ ոչ պզտի մէկ տող մը մեր կողմանէ աւելցընելու բոլոր Գրքին մէջն ալ:

Ոմանք յազգայնոցս այս երկասիրութեան քանի մը հատուածը տեսած ըլլալով՝ յորդորեցին ընծայել զայն փութով հասարակաց: Յիշենք միայն յանուանէ գլխաւորոյ Տեսքսն Մանուկ Գափամանեան եւ Մարտիրոս Թոգաբէկեան, որ այս քերթուածոց տպագրութիւնը դիւրացընելու համար իրենք իրենցմէ առաջարկեցին մեզ եւ ուզեցին բաժանորդութիւն մը բանալ առ այս ի նստանդնուալոյիս (*):

Բայց մեր յուսամք որ ամեն Հայու սիրտ պիտի մեր ջանիցը քաղցր ակամբ հայի, տեսնելով որ մեր վախճանն եղած է իրենց օրինաւոր փառասիրութիւն մը մատակարարել: Այո, Հայը առաջին ազգը պիտի ըլլայ՝ չըսենք արեւելեայց մեջ՝ հապա նաեւ բոլոր աշխարհիս առջեւը՝ որ հուշակաւոր քերթողին հանճարոյն այս մեծարանքը

Sans croire entièrement mériter les éloges des hommes les plus éminents de notre nation, parmi les linguistes et les poètes; sans trop nous prévaloir de la bienveillante approbation de Lamartine lui-même, nous pensons cependant avoir rempli la partie principale de notre tâche: je veux dire l'exactitude de la traduction. Nous n'avons pas perdu de vue un seul instant que le traducteur doit être, avant tout, le miroir fidèle de l'auteur qu'il interprète. Aussi, après avoir cherché à pénétrer dans toute leur profondeur les idées du grand Poète, à saisir la portée des expressions dans leurs acceptions les plus intimes, avons-nous apporté tous nos efforts à le traduire, vers pour vers, malgré la hardiesse des images et les difficultés que présente la différence de génie des deux langues. Nos patients efforts ont atteint ce résultat; ce n'est que pour profiter de la latitude que nous donnait la richesse de notre poésie arménienne, que parfois nous avons adopté un rythme différent mais dans aucun cas, dans les quatre livres, nous n'avons ajouté une expression étrangère ni un vers que n'ait écrit le Poète.

Plusieurs de nos compatriotes, auxquels nous avons communiqué quelques parties de notre travail, nous ont vivement engagé à le faire paraître le plus tôt possible. Nous citerons entre autres MM. Manough Kapamadjian et Mardiros Tokatljan, qui se sont en outre offerts à nous faciliter l'impression de cet ouvrage, en nous proposant d'ouvrir eux-mêmes, à ce sujet, une souscription à Constantinople (*).

D'un autre côté, les Arméniens voudront bien nous tenir compte de l'ambition légitime qui nous a porté à entreprendre cette tâche. Oui, l'Arménien sera le premier peuple, non-seulement parmi les Orientaux, mais dans le monde entier, à rendre un tel hommage au génie de l'illustre Poète, hommage dont l'avenir, nous l'espérons, lui fera

(*) Ուրիշ տեղուանք գտնուողներն ալ երկ ԳՐԾՆԱԳՈՒԹԵԱՆՆԵՐ համար ստորագրուիլ ուզեն՝ կրնան կամ ուղղակի մեզ գրել, Grenelle, rue Violet, 60, PARIS. եւ կամ Օրազգիս Գործակալացը մէկուն: ԳՐԾՆԱԳՈՒԹԵԱՆ, ինչպէս նաեւ ՀԱՅ-ՎԱՅԳԻՒՄԱՆ ԲԱՌԱՎՈՐՈՅ Ստորագրողաց անունները պիտի հրատարակուին:


(*) Les personnes qui, dans d'autres villes, désireront souscrire pour cet ouvrage, pourront s'adresser à nous directement à Grenelle, rue Violet, 60, PARIS, ou aux correspondants de notre journal. Les noms des souscripteurs de cet ouvrage, ainsi que ceux du DICTIONNAIRE ARMÉNIEN-FRANÇAIS, seront publiés.

մատուցանէ . մեծարանք՝ զոր ապագայն յուսամք որ պիտի Ազգիս արդիւնք մը համարի : Մինչեւ հիմա ոչ ոք յերոպական լեզուաց *Դաշնակութեանց* ամբողջ բարգմանութիւն մը դեռ ունի . (քէ եւ ամէն ազգ եւրոպայ այս քերթուածոյն վրայ կհիանայ):

Հաճեցի Լամարթին բոլոր ազգի մը երախտագիտութեան այս տկար մէկ հաւատարմութիւնը, խփխարեմ այն համակրութեանն՝ նա մանաւանդ քէ բարեկամութեան՝ զոր այլ եւ այլ

un mérite. Jusqu'à ce jour, il n'est pas une nation européenne qui possède une traduction complète des HARMONIES;

Que Lamartine veuille bien agréer ce faible témoignage de la reconnaissance de tout un peuple pour la vive sympathie, je dirai plus, pour l'amitié qu'il lui a toujours témoignée en tant de cir-



ԱՍՓՐՔԻՆ. — LAMARTINE.

առիթներու մէջ յայտնած է ազգիս Հայոց Արդին իւր անունը քաջաճանօր է եւ մեծարելի մեր համազգեացն առջեւ, բայց երբ ամէնքն առ հասարակ կարենան իւր վսեմ քերթուածները ճանաչել՝ մեծարանաց հետ խորին զարմանք մ'ալ պիտի խառնուի, որով եւ մեր փափագը լեցուելով՝ մեր աշխատութեանցն ալ փոխարենը պիտի ընդունած ըլլամք առատապէս :

constances. Sans aucun doute, son nom est connu et vénéré de nos compatriotes, mais dès qu'ils seront tous à même de connaître ses poésies sublimes, à ce sentiment se joindra l'admiration la plus profonde, et alors notre vœu le plus ardent sera réalisé, et nous serons amplement dédommagé de nos efforts.